

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ ճանաչելու մասին

13 օգոստոսի, 2018թ.

ք. Երևան

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչության Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ. Վ. Մաթևոսյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ 13850218 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

2018 թվականի հուլիսի 2-ին հաղորդում է տվել Սվետլանա Արկադիի Հայրապետյանն այն մասին, որ նույն օրը՝ ժամը 08:30-ի սահմաններում, ամուսինը՝ Լորիկ Ներսեսի Հայրապետյանն իրենց՝ Լեո 35 տանը, կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ ուղքերով և ձեռքերով մի քանի անգամ հարվածներ է հասցրել մարմնի տարբեր հատվածներին, որի արդյունքում զգացել է ֆիզիկական ցավ:

Նույն օրը նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն ստացվել փորձագետի թիվ 1273 եզրակացությունն այն մասին, որ Ս. Հայրապետյանի մարմնական վնասվածքները՝ աջ բազկի շրջանի արյունազեղումների ձևերով, պատճառվել են բուլք, կոշտ առարկաներով, հնարավոր է նշված ժամկետում և հանգամանքներում, որոնք առողջության թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում:

Դեպքի առթիվ «Նստիկանության Կենտրոնական բաժնում «Քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով 2018 թվականի հուլիսի 12-ին հարուցվել է թիվ 13850218 քրեական գործը, որը նախաքննություն կատարելու նպատակով ուղարկվել է «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի և ընդունվել վարույթ:

Քննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել որպես տուժող հարցաքննել Սվետլանա Արկադիի Հայրապետյանին, սակայն քանի որ նա չի տիրապետում դատավարության լեզվին, այլ տիրապետում է ռուսերենին, ուստի անհրաժեշտ է ներգրավել թարգմանիչ, ով ազատորեն տիրապետում է ռուսերեն և հայերեն գրավոր լեզուներին, իսկ որպես այդպիսին հանդես է գալիս «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ճանաչել և ներգրավել Արինե Հայկի Հարությունյանին՝ նրան պարզաբանելով «Քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել «Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝



Գ. Վ. Մաթևոսյան

Որոշմանը ծանոթացա, պարզաբանվել է «Քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ա. Հարությունյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

20.08.2018թ.

ք. Երևան

Տրվում է <<ՎԻ Գրուպ>> ՍՊԸ-ի թարգմանիչ Արինե Հարությունյանին առ այն, որ նա ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 13850218 քրեական գործով կատարել է 4 ժամ բանավոր և գրավոր թարգմանություն հայերենից ռուսերեն և հակառակը:

Ավագ քննիչ՝



Գ. Վ. Մաթևոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

04-ը հուլիսի, 2018թ.

ք. Երևան

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի ՀԿԳ քննիչ Գեղամ Գալստյանս, քննարկելով վարույթում քննվող թիվ 60113518 քրեական գործի նյութերը,
Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

2018 թվականի մայիսի 16-ին՝ ժամը 10:45-ի սահմաններում, Երևան քաղաքի Ներքին Չարբախ 5-րդ փողոցում՝ թիվ 13 տան դիմացի ճանապարհահատվածում, ավտովարորդ Հակոբ Սարգսի Շառոյանն իր վարած «Օպել» մակնիշի, 35 PD 483 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով վրաերթի է ենթարկել հեփոփոյն՝ անչափահաս Գրիգոր Կարապետի Ստեփանյանին, ինչի հետևանքով վերջինս պատճառվել է միջին ծանրության մարմնական վնասվածքներ:

Դեպքի առթիվ Երևան քաղաքի քննչական վարչության ՃՏՀ քննության բաժնում 2018 թվականի մայիսի 29-ին ՀՀ Վճռաբեկ դատարանի ՎԲ-73/08 որոշման 13-րդ կետի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 60113518 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Նկատի ունենալով, որ սյուն քրեական գործի ընթացքում անհրաժեշտ է հարցաքննել տուժող Գրիգոր Կարապետի Ստեփանյանին, ով չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, իսկ բանավոր լեզվին տիրապետում է ոչ ամբողջական, սակայն տիրապետում է ռուսերեն բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռնել նրան թարգմանիչ օգնությամբ իրականացնել քրեադատարական օրենքով սահմանված իր իրավունքները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15-րդ և 83-րդ հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն Քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել Արինե Հայկի Հարությունյանին (լիազորագիր տրված «Վի Գրուպ» ՍՊ ընկերության կողմից) և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատարանի օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

2. Որոշման մասին հայտնել Արինե Հարությունյանին:

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները և պարտականություններն ինձ պարզաբանված են, թարգմանիչ՝

04-ը հուլիսի, 2018թ.

Թարգմանիչ

Վ. Կարապետյան

ՀԿԳ քննիչ

Գ. Գալստյան


ՏԵՂԵԿԱՆՔ

4 հուլիսի 2018թ.

ք. Երևան

Երևան քաղաքի քննչական վարչության ՃՏՀ քննության բաժնի ՀԿԳ քննիչ Գ. Գալստյանս վարույթումս քննվող թիվ 60113518 քրեական գործով կազմեցի սույն տեղեկանքն առ այն, որ <<Վի Գրուպ>> ՍՊԸ-ի թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանը 2018 թվականի հուլիսի 4-ին՝ ժամը 10:30-ից մինչ ժամը 12:10-ն ընկած ժամանակահատվածում կատարել է բանավոր թարգմանություն հայերենից ռուսերեն և հակառակը:

ՀԿԳ ՔՆՆԻՉ՝



Գ. ԳԱԼՍՏՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թիվ 13862618 քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

06.08.2018թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, առաջին դասի խորհրդական Լ.Ս.Ղազարյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 13862618 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2018 թվականի հուլիսի 4-ին՝ ժամը 19:40-ին <<Սուրբ Գրիգոր Լուսավորիչ>> բժշկական կենտրոնից ահազանգ է ստացվել, որ իրենց մոտ <<Պոլիտրավմա>> ախտորոշմամբ բուժօգնության է դիմել Գուլչիխրա Աբդուրախիմի Նուրիջանյանը և հայտնել, որ հարսը տանը իրեն ծեծի է ենթարկել:

Նույն օրը՝ ժամը 22:00-ին, Գ.Նուրիջանյանը հաղորդում է տվել այն մասին, որ իր հարսը՝ Նվարդ Պարզևի Բարսեղյանը, 04.07.2018 թվականին՝ ժամը 18:30-ի սահմաններում, կենցաղային հարցերի շուրջ առաջացած վիճաբանության ժամանակ 2 անգամ բռունցքով հարվածել է գլխին և 1 անգամ կողքին՝ պատճառելով մարմնական վնասվածք:

Նյութերի նախապատրաստման ընթացքում կայացվել է որոշում Գ.Նուրիջանյանին դատաբժշկական փորձաքննության ենթարկելու մասին և ստացվել է փորձագետի թիվ 1910/հ եզրակացությունը, համաձայն որի՝ Գ.Նուրիջանյանի ստացած մարմնական վնասվածքները, ըստ ներկայացված բժշկական փաստաթղթերի պատճենի տվյալների՝ գազաթային, աջ բազկի շրջանների փափուկ հյուսվածքների սալջարդի ձևով, հասցվել են բութ առարկաներով, հնարավոր է նշված ժամկետում, որոնք առողջության թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում:

Գուլչիխրա Աբդուրախիմի Նուրիջանյանի հաղորդման առթիվ 24.07.2018 թվականին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 13862618 քրեական գործը, որը 31.07.2018թ.-ին ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում: Նշված քրեական գործով նախաքննության կատարումը 01.08.2018 թվականին հանձնարարվել է ինձ, որը համապատասխան որոշմամբ ընդունվել է վարույթ:

Գ.Ա.Նուրիջանյանը համապատասխան որոշմամբ ճանաչվել է տուժող:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական գործով տուժող Գուլչիխրա Աբդուրախիմի Նուրիջանյանը ոչ բավարար չափով է տիրապետում հայերեն գրավոր լեզվին, տիրապետում է ռուսերեն բանավոր ու գրավոր լեզվին, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունն իրականացվում է հայերեն լեզվով, անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել «Վի

Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Արմինե Մինասյանին՝ կատարվելիք քննչական գործողություններին մասնակցելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 13862618 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ից Արմինե Մինասյանին /AN0213064/:
2. Արմինե Մինասյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝



Լ.Ս.Ղազարյան

Ծանոթացա թարգմանիչի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

_____ Ա.Մինասյան

« » _____ 2018թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ
ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Երևան 0070, Վրացյան փ. 90

<< 10 >> 09 201 թ.


№ _____

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Տրվում է <<Վի Գրուպ>> ՍՊԸ թարգմանիչ Արմինե Քաջիկի Մինասյանին առ այն, որ վերջինս համապատասխան որոշման հիման վրա ներգրավված ինելով ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության լեներոն և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում քննվող ՎՊ 13862618 քրեական գործով որպես թարգմանիչ, 10.09.2018 թվականի որոշյամբ մատուցել է ընդհանուր 3 (երեք) ժամ պևողությամբ թարգմանչական ծառայություններ:

Քննիչ,
առաջին դասի խորհրդական՝

L.Ս. Ղազարյան



**Որոշում
թարգմանիչ հրավիրելու մասին**

ք. Էջմիածին

10 դեկտեմբերի 2018թ.

ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Գաբրիելյանս, վերանայելով վարույթիս թիվ 57158318 քրեական գործի նյութերը՝

Պարզեցի

2018թ մարտի 17-ին ժամը 20:00-ին, ոստիկանության Վաղարշապատի բաժնում Սաֆար Բաղերի Մուսավի Շամին հաղորդում է տվել այն մասին, որ 2017թ-ի հոկտեմբեր ամսվա կեսերին՝ դեռևս չպարզված օրը, Սերժիկ Արամայիսի Գաբրիելյանն իր իրական կամ ենթադրյալ իրավունքներն ինքնական իրականացնելով, 50.000 ՀՀ դրամ պարտքի դիմաց վերցրել է իրեն պատկանող կոմբաին-շարքացանը և վաճառել, ինչի արդյունքում վերջինիս պատճառվել է 1.000.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Դեպքի առթիվ 27.03.2018թ-ին ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 57158318 քրեական գործը, և ըստ քննչական ենթակայության ուղարկվել է ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի և ընդունվել է վարույթ:

Սաֆար Բաղերի Մուսավի Շամիրը ճանաչվել է տուժող:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել առերես հարցաքննելու Սաֆար Մուսավիին և Միխայիլ Հովհաննիսյանին,ինչպես նաև Արմեն Չոփուրյանին:

Նախաքննությամբ պարզվել է, որ Սաֆար Մուսավիին չի տիրապետում քրեական դատավարության լեզվին, այսինքն՝ տիրապետում է պարսկերեն բանավոր և գրավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ Սաֆար Մուսավիին չի տիրապետում ՀՀ քրեական դատավարության լեզվին՝ հայերենին, և ազատորեն տիրապետում է հայերեն բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռնել նրան թարգմանիչի օգնությամբ իրականացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իր իրավունքները:



Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով՝

Որոշեցի

1. Թիվ 57153818 քրեական գործով տուժող Սաֆար Մուսավի Շամիի համար հայերենից պարսկերեն ու հակառակը թարգմանելու համար որպես թարգմանիչ հրավիրել և վարույթին մասնակից դարձնել „Վի Գրուպ“ ՍՊԸ-ի պարսկերենի թարգմանիչ Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին /անձնագիր AK 0552856/, ով ազատորեն տիրապետում է հայերեն և պարսկերեն լեզուներին, վերջինս գործով չչահագրգռված անձ է:

2. Թարգմանիչ Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին պարզաբանել նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ



Գ.Վ.Գաբրիելյան

Ծանոթացրեցի օրոճակը թափ 2. թափաճաճաճա


ՏԵՂԵԿԱՆՔ

ք. Էջմիածին

28.02.2019թ.

ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային ըննչական վարչության ավագ քննիչ Գ. Գաբրիելյան, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթումս քննված թիվ 57158318 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավված «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Հրանուշ Թախմասյանը կատարել է հայերենից պարսկերեն և հակառակը բանավոր թարգմանություն 6 ժամ տևողությամբ:

Ավագ քննիչ՝



Գ. Գաբրիելյան

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՔԿ Արմավիր մարզային քննչական վարչության ավագ քննիչ Գ. Գաբրիելյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթում քննված թիվ 57158318 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավված "Վի Գրուպ" ՍՊ ընկերության թարգմանիչ Վահագն Ղազարյանը կատարել է հայերենից պարսկերեն և հակառակը բանավոր թարգմանություն 6ժ տևողությամբ, իսկ Հրանուշ Թախմասյանը՝ 5ժ:

Ավագ քննիչ



Գ. Գաբրիելյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

քրեական գործի վարույթին թարգման ներգրավելու մասին

12. 09. 2018թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական՝ Գ.Ս.Նահապետյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ 13852718 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2018 թվականի հուլիսի 03-ին՝ ժամը 19:40-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում է տվել Մեգալա Արումուգամը այն մասին, որ 2018 թվականի հուլիսի 03-ին՝ ժամը 16:30-ի սահմաններում, Մաշտոցի պողոտայում նկատել է, որ անհայտ անձը թիվ 27 երթուղայինի մեջ օգտվելով իր անուշադրությունից, իր պայուսակից գաղտնի հափշտակել է իր "Լենվո" մոդելի բջջային հեռախոսը՝ պատճառելով 120.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Դեպքի առթիվ 2018 թվականի հուլիսի 13-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 13852718 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ տուժող Մ.Արումուգամը չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, այլ տիրապետում է անգլերեն գրավոր և բանավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտություն է առաջացել կատարել քննչական գործողություններ, իսկ վերջինս բավարար չափով չի տիրապետում գրավոր և բանավոր հայերեն լեզվին, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 13852718 քրեական գործով, որպես թարգման ներգրավել ՀՀ Վի Գրուպ>> ՍՊ ընկերության թարգմանիչ Մանիկ Աչարյահին:

2. Թարգման Մ.Աչարյահին պարզաբանել ՀՀ Քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝

Գ.Ս.Նահապետյան

Որոշմանը ծանոթացա: Պարզաբանվել են ՀՀ քր. դատ. օր. 83 հոդ. նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր. 338 հոդ. նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝

Տեղեկանք

12.09.2018թ

ք.Երևան

Հայտնվում է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում թիվ 13852718 քրեական գործով «Վի գրուպ» ընկերության թարգմանիչ՝ Մանիկ Աչարյան կատարել է անգլերենից հայերեն և հակառակը բանավոր թարգմանություն 2 ժամ տևողությամբ:

Ավագ քննիչ՝



Գ.Ս.Նահապետյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

05-ը սեպտեմբերի 2018թ.

ք. Գավառ

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության քննիչ, երրորդ դասի խորհրդական Հ.Ս.Դադոյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 40103818 քրեական գործի նյութերն, ըստ մեղադրանքի Խաչատուր Գառնիկի Հարությունյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ և 11-րդ կետով:

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2018թվականի օգոստոսի 22-ին, ժամը 21³⁰-իսահմաններում, Գավառքաղաքի Ջոհված Ազատամարտիկներ փողոցի 2-րդ նրբանցքի 5-րդշենքի 47-րդ բնակարանի բնակիչ՝ Խաչատուր Գառնիկի Հարությունյանը, նույն շենքի 4-րդ հարկի 46-րդ հասցեում գտնվող Սիլվա Սուրենի Տոնիյանի բնակարանից գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ իր Գավառ քաղաքի Ջոհված Ազատամարտիկներ փողոցի 2-րդնրբանցքի 5-րդշենքի 4-րդ հարկի 47 հասցեի բնակարանի պատշգամբից անցել է Սիլվա Տոնիյանի բնակարանի պատշգամբ և դռնից ապօրինի մուտք է գործել բնակարան, որտեղ հյուրասենյակում գտնվող պայուսակից հափշտակել է զգալի չափերով գույք՝ 5 կտոր ոսկյա զարդեր, և 7140 ՀՀդրամին համարժեք 1000 ՌԴ ռուբլի, սեղանի վրայից բջջային մեկ հեռախոս: Այդ պահին տուժող Սիլվա Տոնիյանը վերադարձել է տուն ու փորձել է կանխել հափշտակությունը:

Խաչատուր Հարությունյանն հափշտակությունը բացահայտ շարունակելու և մինչև վերջ հասցնելու գործընթացը հեշտացնելու և թաքցնելու նպատակով, հատակից վերցրել է աղյուս, հարձակվել Սիլվա Տոնիյանի վրա ու ապօրինաբար նրան կյանքից զրկելու դիտավորությամբ բազմաթիվ հարվածներ է հասցրել Սիլվա Տոնիյանի կենսական կարևոր օրգան հանդիսացող գլխիշրջանին, պատճառելով կյանքի համար վտանգավոր ծանր վնասվածքներ՝ փակ գանգուղեղային տրավմա, գլխուղեղի սալջարդ, տրավմատիկ շոկ, գլխի մազածածկ հատվածի բազմաթիվ սալջարդ վերքեր: Ստացած մարմնական վնասվածքներից Սիլվա Տոնիյանը վայր է ընկել գետնին և կորցրել գիտակցությունը, իսկ Խաչատուր Գառնիկի Հարությունյանը հասկանալով, որ Սիլվա Տոնիյանին սպանել է, դեպքի վայրից դիմել է փախուստի, սակայն հանցանքն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով, քանի որ դեպքի վայր ժամանած շտապ բուժօգնության խումբը Սիլվա Տոնիյանին տեղափոխել է հիվանդանոց և փրկել նրա կյանքը:

Գեղարքունիքի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 40103818 քրեական գործը:

2018թ. օգոստոսի 22-ին որոշում է կայացվել Սիլվա Սուրենի Տոնիյանին տուժող ճանաչելու մասին:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով Սիլվա Սուրենի Տոնիյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, անհրաժեշտ է ռուսերեն լեզվի թարգմանություն կատարել, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.


Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Վարույթումս քննվող թիվ 40103818 քրեական գործով թարգմանիչ հրավիրել «Վի գրուս»
ՍՊԸ-ի թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանին:

2.Որոշումը ծանոթացնել տուժող՝ Սիլվա Տոնիյանին:

Որոշմանը ծանոթացա

Քննիչ՝


Վ. ԴԱԴՈՅԱՆ

Վ. ԴԱԴՈՅԱՆ


ՏԵՂԵԿԱՆՔ

¹⁰
04.09.2018թ.

ք.Երևան

Տրվում է „Վի Գրուպ“, ՍՊԸ-ի թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանին առ այն, որ նա ՀՀ ՔԿ Գեղարքունիքի մարզային քննչական քննվող թիվ 40103818 քրեական գործով 04/09/2018թ. գրավոր և բանավոր կատարել է 3 ժամ թարգմանություն հայերենից ռուսերեն և հակառակը:

ՔՆՆԻՉ



Հ.Ա.ԴԱԴՈՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

10.09
04.10.2018թ.

ք.Երևան

Տրվում է „Վի Գրուպ“, ՍՊԸ-ի թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանին առ այն, որ նա ՀՀ ՔԿ Գեղարքունիքի մարզային քննչական քննվող թիվ 40103818 քրեական գործով 10/09/2018թ. գրավոր և բանավոր կատարել է 4 ժամ թարգմանություն հայերենից ռուսերեն և հակառակը:

ՔՆՆԻՉ



Հ.Ս.ԴԱԴՈՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

10.09.2018թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ռ.Գ. Խաչատրյանս, վերանայելով թիվ 13882318 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018թ. օգոստոսի 7-ին՝ ժամը 17.10-ին, ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում է տու Անժելա Սուրենի Ալեքսանյանն այն մասին, որ օգոստոսի 6-ին՝ ժամը 21.00-ի սահմաններում, Երևան Խորենացու փողոցում գտնվող առևտրի կենտրոններից մեկում ոմն Ալբերտը զանգահարել պատրվակով վերցրել է դստեր՝ Միլենա Հակոբի Բոյախյանի «Այֆոն 6» մոդելի բջջային հեռախոսը հեռացել՝ պատճառելով 300.000 ՀՀ դրամի նյութական վնաս:


Ձեռնարկված միջոցառումներով պարզվել է, որ Ալբերտը հանդիսանում է Ալբերտ Արթուրի Բոչյանը Դեպքի առթիվ 2018թ օգոստոսի 17-ին ոստիկանության Կենտրոնական բաժնում ՀՀ քր. օր. 178-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 13882318 քրեական գործը, ապա նախաքննությո կատարելու նպատակով ուղարկվել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական գործով տուժող Միլենա Հակոբի Բոյախյանը տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է ռուսերեն բանավոր ու գրավոր լեզվին, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունն իրականացվում է հայերեն լեզվով անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել 'Վի Գրուպ' Լ ընկերության թարգմանիչ՝ Արմինե Միասյանին, Մ. Բոյախյանի մասնակցությամբ կատարվել քննչական գործողություններին մասնակցելու համար:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 5 րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Թիվ 13882318 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել Վի Գրուպ՝ ՍՊ ընկերության թարգմանիչ Արմինե Միասյանին:
2. Արմինե Միասյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդված նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝  Ռ.Գ. Խաչատրյան

Ծանոթացա թարգմանիչի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգման  Ա. Միասյանին
10, 00 2018թ.

ՏԵՂԵԿԱԼՔ

19.09.2018թ

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 13882318 քրեական գործով 'Վի Գրուպ' ՍՊ ընկերության թարգմանիչ՝ Արմինե Միասյանը քրեական գործով վարույթին ներգրավվել է, որպես թարգման և կատարել է 5 ժամ 10 րոպե ռուսերենից հայերեն և հակառակը բանավոր թարգմանություն:

Ավագ քննիչ



Ռ. Գ. Խաչատրյան

« 19 » հոկտեմբերի 2018թ.

ք.երևան

ՀՀ Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ՝ Ա.Ս.Հարությունյան, քննարկելով վարույթի թիվ 09183318 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018թ.-ի սեպտեմբերի 17-ին ժամը 02:10-ին Վիկտոր Կիմիկի Խանյանը հաղորդում է տվել այն մասին, որ 2018թ.-ի սեպտեմբերի 17-ին ժամը 01:00-ի սահմաններում Երևան քաղաքի Հր. Ներսիսյան 4-րդ շենքի 37-րդ բնակարանի աստիճանահարթակին վիճարանել է հարևանուհի Տատյանա Սերգեյի Ռաշիդովայի հետ, տեղի ունեցած վիճարանության ընթացքում Տատյանա Ռաշիդովան պտտակահանով հարվածներ է հասցրել իր պարանոցի շրջանին՝ պստոնահարվել մարմնական վնասվածքներ և ֆիզիկական ցավ:

2018թ.-ի սեպտեմբերի 27-ին Վիկտոր Խանյանը պնդել է իր բողոքը:

2018թ.-ի սեպտեմբերի 27-ին Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ոստիկանության բաժնի հետաքննության բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով հարուցվել է թիվ 09183318 քրեական գործը:

2018թ.-ի հոկտեմբերի 01-ին թիվ 09183318 քրեական գործի հետագա նախաքննությունը հանձնարարվել է ինձ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Աննա Սերգեյի Ռաշիդովան հայտարարել է, որ չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին և ազատորեն տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի պահանջներով:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթի թիվ 09183318 քրեական գործով թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի աշխատակից՝ Անուշ Սուրենյի Խանիկյան, որին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քանաքեռ-Զեյթուն քննչական
բաժնի քննիչ՝

Ա.Ս.Հարությունյան

Բողոքի հետ ծանոթացա, իմ իրավունքները և պարտականությունները ինձ պարզաբանված են թարգմանիչ՝

« 19 » հոկտեմբերի 2018թ.

Թարգմանիչ՝ Անուշ Սուրենյի Խանիկյան

Տեղեկանք թիվ 09183318 քրեական գործով

19.10.2018թ.

ք.Երևան

Սույն տեղեկանքը տրվում է "Վի Գրուպ" ՍՊԸ-ի աշխատակից Անուշ Խանիկյանին առ այն, որ Անուշ Խանիկյանը 2018թ. հոկտեմբերի 19-ին ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 09183318 քրեական գործով մասնակցել է Ուկրաինայի քաղաքացի Տատյանա Սերգեյի Ռաշիդովայի որպես վկա հարցաքննությանը և կատարել է հայերենից ռուսերեն թարգմանությանը, որը տևել է 1 ժամ 30 րոպե:

Քննիչ



Ա.Ա.Հարությունյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ ներգրավելու մասին

02 11 2018թ

ք. Արուսյան

«ՔԿ Արուսյանի քննչական բաժնի քննիչ Հ.Կարապետյանս, վերանայելով վարույթիս թիվ 20115818 քրեական գործի նյութերը»

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2018 թվականի հոկտեմբերի 19-ին ժամը 20.00-ից 23.30-ն ընկած ժամանակահատվածում, անհատ անձն ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել է Ռիմա Նիկոլայի Պողոսյանին պատկանող, Արուսյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 44-րդ շենքի թիվ 5 բնակարանի եվրոպական արտադրության պատուհանը և ապօրինի մուտք գործելով բնակարան գաղտնի հափշտակել է թվով մեկ հատ ոսկյա և երկու հատ արծաթյա մատանիներ, 170,000 ՀՀ դրամ գումար՝ 500 ՀՀ դրամ անվանական արժեքով մետաղադրամներով, մեկ հատ 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով թղթադրամ և 3,434 ՀՀ դրամին համարժեք 200 ուկրաինական գրիվնյա Ռիմա Պողոսյանին պատճառելով զգալի չափերի, ընհանուր 223,434 ՀՀ դրամի գույքային վնաս:

Դեպքի առթիվ 20.10.2018թ. «ՔԿ Արուսյանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 20115818 քրեական գործը, որի նախաքննության կատարումը 22.10.2018թ-ին հանձնարարվել է ինձ և նույն օրը ընդունվել է վարույթ:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ տուժող ռիմա Պողոսյանը և վկա ժաննա Դավթյանը չեն տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում են ռուսերեն բանավոր ու գրավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ նրանց մասնակցությամբ անհրաժեշտ է կատարել դատավարական գործողություններ, որի համար անհրաժեշտ է գործին թարգման ներգրավել, ուստի ելնելով վերոգրյալից և Դեկլավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15 և 83 հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Սույն քրեական գործով թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ >> ընկերության թարգմանիչ Վիոլետա Ալեքսանդրի Խաչատուրովան, ով հավասարապես տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին:

2.Թարգմանին ծանոթացնել և պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդ. նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու դամար ՀՀ քր. օր-ի 338 հոդ. նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՔՆՆԻՉ

Հ.Կարապետյան

Որոշմանը ծանոթացել են, իմ իրավունքներն ու պարտականությունները բացատրվել են, նախազգուշացվել են ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:


Թարգման

ՏԵՂԵԿԱՆՔ

ք. Արուսյան

ՀՀ քննչական կոմիտեի Արուսյանի քննչական բաժնի քննիչ՝ Հ.Կարապետյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթումն քննվող թիվ 20115818 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավված «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ՝ Վիոլետա Խաչատրյան կատարել է ուսերենից հայերեն և հակառակը բանավոր թարգմանություն՝ 2 ժամ 30 րոպե տևողությամբ:

Քննիչ՝



Հ.Կարապետյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

03.11.2018թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, երրորդ դասի խորհրդական Գ.Ա.Ալեքսանյանս , վերանայելով վարույթից թիվ 12872418 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2018 թվականի հոկտեմբերի 10-ին՝ ժամը 15:30-ին ոստիկանության Էրեբունու բաժնում հաղորդում է տվել Երևան քաղաքի Շահումյան 4 փողոցի 15/1 տան բնակիչ Տելեգին Նիկոլայի Միխայիլը այն մասին, որ 2018 թվականի հոկտեմբերի 9-ին՝ ժամը 20:00-ից մինչև 2018 թվականի հոկտեմբերի 10-ը՝ ժամը 09:00-ն ընկած ժամանակահատվածում անհայտ անձը գողացել է իրեն պատկանող՝ Երևան քաղաքի Ռոստոմյան-Երկաթուղայիններ փողոցների հատման խաչմերուկի մոտ կայանված, տրակտորի կոշը և հիդրոպերֆերատորը՝ վերջինիս պատճառելով 5000 ԱՄՆ դոլարին համարժեք 2.425.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Դեպքի առթիվ 22.10.2018թ. ոստիկանության Էրեբունու բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 12872418 քրեական գործը:

23.10.2018թ. թիվ 12872418 քրեական գործը ստացվել է Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին և ընդունվել վարույթ:

Պարզվել է , որ տուժող Միխայիլ Նիկոլայի Տելեգին չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, սակայն ազատորեն տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին և ցանկություն է հայտնել նախաքննության ընթացքում հանդես գալ ռուսերեն լեզվով

Նկատի ունենալով, որ Միխայիլ Նիկոլայի Տելեգին չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, իսկ Արինե Հարությունյանը ազատորեն տիրապետում է ռուսերեն և հայերեն գրավոր և բանավոր լեզուներին, հանդիսանում է գործի ելքով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

125

Թարգմանիչ ներգրավելու մասին

14 սեպտեմբերի, 2018թ.

քաղ. վանաձոր

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ Լ.Բ. Պառավյանս, ուսումնասիրելով թիվ 33200618 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Լերմոնտովո գյուղի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի ուսուցչուհի Նարինե Միշայի Մաթևոսյանը, հանդիսանալով հիմնական դպրոցի 2016-2017 թվականների ուստարվա <<Հայոց լեզու և գրականություն>> առարկայի քննական հանձնաժողովի անդամ և իր կարգավիճակի բերումով իրականացնելով պաշտոնատար անձի լիազորություններ, 2017 թվականի հունիս ամսվա ընթացքում Նինա Շուրինայից ստացել է 50.000 դրամ կաշառք՝ վերջինիս և համագյուղացիներ Նատայա Դոլոգովայի, Տատյանա Շուրինայի, Նատայա Դոկարևայի և Նարինե Ամոյանի երեխաների <<Հայոց լեզու>> առարկայի վերաքննությունը գնահատելու համար:

Դեպքի առթիվ Լոռու մարզի դատախազությունում 2018 թվականի օգոստոսի 14-ին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի և 312-րդ հոդվածի 1-ին մասի հատկախիշներով հարուցվել է թիվ 33200618 քրեական գործը:

2018 թվականի օգոստոսի 15-ին քրեական գործն ըստ ենթակայության ուղարկվել և մուտքագրվել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչություն՝ նախաքննություն կատարելու համար և ընդունվել վարույթ:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հարցաքննել Լոռու մարզի Լերմոնտովո գյուղի մի շարք բնակիչների, որոնք չեն տիրապետում հայերեն գրավոր լեզվին և այլ տիրապետում են ռուսերեն լեզվին:

Նախաքննությամբ պարզվել է որ Հակոբ Առուշանյանն ունի բարձրագույն կրթություն, ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15 և 83 հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել Հակոբ Առուշանյանին՝ բարձրագույն կրթությամբ:

2.Թարգմանիչ հակոբ Առուշանյանին ծանոթացնել և պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝  Լ. Պառավյան

Թարգմանիչը քրեական գործով չչահագրգռված այն անձն է, որին քրեական վարույթն իրականացնող մարմինը հրավիրում է թարգմանություն իրականացնելու համար:
2. Թարգմանիչը պետք է ազատորեն տիրապետի քրեական դատավարության լեզվին և այն լեզվին, որից կատարվում է թարգմանությունը:

Դատավորը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմնի աշխատակիցը, պաշտպանը, ներկայացուցիչը, ինչպես նաև դատավարության այլ մասնակիցները, ընթերական, դատական նիստի քարտուղարը, փորձագետը, վկան իրավունք չունեն թարգմանիչ լինելու:

3. Թարգմանիչ է համարվում նաև համրի նշանները հասկացող և խոսի հետ նշաններով բացատրվելու ունակ անձը:

4. Թարգմանիչը պարտավոր է՝

- 1) թարգմանություն կատարելու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով:
 - 2) քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել թարգմանիչի՝ իր որակավորումը հաստատող փաստաթղթերը:
 - 3) քրեական վարույթն իրականացնող մարմնի, ինչպես նաև կողմերի պահանջով դատական նիստի ընթացքում տեղեկություններ հայտնել իր մասնագիտական փորձի և համապատասխան քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հետ հարաբերությունների մասին:
 - 4) թարգմանությունն ապահովելու համար անհրաժեշտ ամբողջ ժամանակահատվածում գտնվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման վայրում, դատական նիստերի դադարում և չլքել նշված գործողության կատարման վայրն առանց այն կատարող անձի թույլտվության, իսկ դատական նիստերի դադարում՝ առանց նախագահողի թույլտվության:
 - 5) թարգմանել լրիվ, ճշտորեն և ժամանակին:
 - 6) նթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին:
 - 7) դատական նիստի ընթացքում պահպանել կարգուկանոն:
 - 8) ստորագրությամբ հաստատել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությունում թարգմանության գրառումների լրիվությունը և ճշտությունը, ինչպես նաև քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:
 - 9) առանց քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չիրապարակել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության ժամանակ, ինչպես նաև դռնփակ դատական նիստում իրեն հայտնի դարձած տեղեկությունները:
5. Թարգմանիչ կողմից իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:
6. Թարգմանիչն իրավունք ունի՝
- 1) թարգմանությունը ճշգրտելու համար հարցեր տալ թարգմանության ընթացքում ներկա գտնվող անձանց:
 - 2) ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությանը, ինչպես նաև համապատասխան մատով՝ դատական նիստի արձանագրությանը և թարգմանության գրառումների լրիվության և ճշտության հետ կապված դիտողություններ անել, որոնք մտցվում են արձանագրության մեջ:
 - 3) ստանալ քրեական գործով վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում:
7. Թարգմանիչն ունի նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

Ծանոթացա որոշմանը, պարզաբանված են իրավունքներս և պարտականություններս, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝

Հ. Առուշանյան

Ավագ քննիչ՝

Լ. Պատավան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

12.11.2018թ

ք. Վանաձոր

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ Լ.Բ. Պառավյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթումս քննվող թիվ 33200618 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավված «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ՝ Հակոբ Առուշանյանը կատարել է ուսերենից հայերեն և հակառակը բանավոր թարգմանություն՝ 522 որպես տևողությամբ:

Ավագ քննիչ՝



Լ.Բ. Պառավյան